

II

(Ոչ օրենսդրական ակտեր)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի****ԹԻՎ 2015/1428 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

«Կենցաղային ոչ ուղղորդված լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Հանձնաժողովի թիվ 244/2009 կանոնակարգը (ԵՀ) եւ «Առանց համակցված բալաստի ֆյուրեցեցենտային լամպերին, բարձր ինտենսիվության պարպումային լամպերին եւ նման լամպերն աշխատացնող բալաստների ու լուսատուների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Հանձնաժողովի թիվ 245/2009 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000/55/ԵՀ հրահանգը եւ «Ուղղորդված լույսի լամպերի, լուսարձակող դիոդային լամպերի եւ նմանատիպ սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Հանձնաժողովի թիվ 1194/2012 կանոնակարգը (ԵՄ) ուժը կորցրած ճանաչող (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի¹ էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ սահմանելու շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո, քանի որ՝

- 1) Հանձնաժողովից պահանջվում է տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից վերանայել Հանձնաժողովի թիվ 244/2009² կանոնակարգը (ԵՀ)՝ հաշվի առնելով մասնավորապես հատուկ նշանակության լամպերի տեսակների վաճառքի զարգացումը՝ հավաստիանալու համար, որ դրանք չեն օգտագործվում լուսավորման ընդհանուր նպատակներով, նոր տեխնոլոգիաների, ինչպես օրինակ՝ լուսադիոդային (ԼԵԴ) լամպերի զարգացումը, ինչպես նաև Հանձնաժողովի 98/11/ԵՀ³ հրահանգով սահմանված «A» դասի մակարդակի էներգաարդյունավետության պահանջների սահմանման հնարավորությունը.
- 2) համաձայն թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) վերանայումից ստացված ապացույցների՝ արտադրողների համար թերեւս տնտեսապես իրագործելի չէ «Տվյալ լուսային հոսքի համար էլեկտրաէներգիայի թույլատրելի առավելագույն ցուցանիշի մասին» Հանձնաժողովի թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) 1-ին աղյուսակում նշված «6-րդ փուլի» համար նախատեսված սահմանային մակարդակին հասնող՝ ցանցային լարման համար նախատեսված հալոգեն լամպեր արտադրելը եւ 2016 թվականի սեպտեմբերի 1-ից շուկայահանելը: Առավել էներգաարդյունավետ լուսավորման տեխնոլոգիաների կանխատեսելի զարգացումների գնահատականը ցույց է տալիս, որ այդ սահմանային մակարդակի ներդրման լավագույն ժամանակահատվածը կլինի 2018 թվականի սեպտեմբերի 1-ը.
- 3) բնապահպանական օգուտներն առավելագույնին հասցնելու եւ օգտագործողի համար տնտեսական ցանկացած բացասական ազդեցություն

² «Կենցաղային ոչ ուղղորդված լամպերի էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 244/2009 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 76, 24.3.2009թ., էջ 3):

³ «Կենցաղային լամպերի էներգիապիտակավորման մասին» Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1998 թվականի հունվարի 27-ի 98/11/ԵՀ հրահանգ (ՊՏ L 71, 10.3.1998թ., էջ 1):

նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է պահանջել, որ լուսատուի հետագա նախագծերը համապատասխանեն լուսավորման էներգաարդյունավետ լուծումներին: Հին, շրջանառությունից հանված տեխնոլոգիաների վրա «արգելափակման» ազդեցության վտանգը պետք է նվազեցվի՝ ապահովելով, որ շուկայահանված լուսատուներն ամբողջովին համապատասխանեն էներգաարդյունավետության առնվազն «Ա+» դասին պատկանող բարձր արդյունավետության լամպերին՝ համաձայն Հանձնաժողովի թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ)¹.

- 4) թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) վերանայմամբ ի հայտ է եկել հատուկ նշանակության լամպերի սահմանումը վերանայելու եւ պարզաբանելու անհրաժեշտություն՝ ընդհանուր լուսավորման սարքերում հատուկ նշանակության լամպերի օգտագործումը նվազեցնելու եւ պահանջները տեխնոլոգիական զարգացումներին համապատասխանեցնելու նպատակով: Նորմատիվ պահանջները հետագայում պետք է նպաստեն տվյալ հատուկ սարքի համար լուսավորման առավել էներգաարդյունավետ լուծումների օգտագործմանը.
- 5) հատուկ նշանակության արտադրատեսակների սահմանմանը եւ արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող պահանջների մասով անհրաժեշտ է ապահովել թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) եւ Հանձնաժողովի թիվ 1194/2012² կանոնակարգի (ԵՄ) համաձայնեցվածությունը, որն ապահովելու լավագույն միջոցը երկու կանոնակարգերում էլ համատեղ փոփոխություն կատարելն է: Դա պետք է հեշտացնի արտադրողների եւ մատակարարողների համար նորմատիվ

¹ «Էլեկտրական լամպերի եւ լուսատուների էներգապիտակավորման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝ Հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 12-ի թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 258, 6.9.2012թ., էջ 1):

² Ուղղորդված լույսի լամպերի, լուսարձակող դիոդային լամպերի եւ նմանատիպ սարքավորումների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1194/2012 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 342, 14.12.2012թ., էջ 1):

պահանջների համապատասխանության ապահովումը եւ նպաստի ազգային մարմինների կողմից շուկայի արդյունավետ վերահսկողությանը.

- 6) թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) վերանայմամբ հանգում ենք այն եզրակացության, որ «A» կամ ավելի բարձր դասի մակարդակի էներգաարդյունավետության պահանջների սահմանման հնարավորությունը պետք է ուսումնասիրվի հետագա մանրակրկիտ հետազոտությամբ, որով պետք է նաեւ գնահատվի Հանձնաժողովի թիվ 245/2009 կանոնակարգով (ԵՀ) ³ եւ թիվ 1194/2012 կանոնակարգով (ԵՄ) նախատեսված արտադրատեսակներին ներկայացվող էներգաարդյունավետության պահանջների բարձրացման, էներգասպառման նվազեցումն օպտիմալացնելու համար յուրաքանչյուրի շրջանակն ընդլայնելու եւ բոլոր երեք կանոնակարգերի՝ լուսավորման արտադրատեսակների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ միասնական, համապարփակ կիրարկման միջոցում ամփոփման հնարավորությունը.
- 7) թիվ 245/2009 կանոնակարգով (ԵՀ)՝ օգտագործման փուլում էներգիան եւ լամպերում սնդիկի պարունակությունը սահմանվում են որպես կարելու նպատակ: Ուստի լամպերի համար նախատեսված արտադրանքի շահագործման պահանջները, որտեղ հաշվի չեն առնվում արտադրանքի արդյունավետությանը ներկայացվող պահանջները կամ սնդիկի պարունակությունը, առաջ են բերում կարգավորման անհարկի բեռ եւ կարող են հանգեցնել արտադրանքը շրջանառությունից անհիմն դուրս բերելուն: Կանոնակարգի կարելու նպատակի շրջանակին համապատասխանեցնելու նպատակով արտադրանքի շահագործման պահանջների շրջանակի փոփոխության արդյունքում պետք է կարգավորվի նորմատիվ համապատասխանությունը.

³ «Առանց համակցված բալաստի ֆյուրեցենտային լամպերի, բարձր ինտենսիվության պարպումային լամպերի եւ նման լամպերն աշխատացնող բալաստների ու լուսատուների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող եւ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000/55/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 18-ի թիվ 245/2009 կանոնակարգ (ԵՄ) (ՊՏ L 76, 24.3.2009թ., էջ 17):

- 8) լուսավորության հետ կապված էկոնախագծման եւ էներգապիտակավորման կարգավորումների վերանայման անհրաժեշտության հարցը դիտարկելիս անհրաժեշտ կլինի վերանայել, ի թիվս այլնի, G9 ու R7s տեսակի կոթառով լամպերի բացառությունը եւ լամպերի նվազագույն էներգաարդյունավետությանը ներկայացվող պահանջները.
- 9) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Թիվ 244/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 244/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվել են հետեւյալ փոփոխությունները.

1. 2-րդ հոդվածը փոփոխվել է հետեւյալ խմբագրությամբ՝

ա) 4-րդ կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«4. «հատուկ նշանակության լամպ» նշանակում է սույն կանոնակարգով նախատեսված տեխնոլոգիաներով աշխատող լամպ, որը, սակայն, տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներկայացված տեխնիկական պարամետրերով պայմանավորված, նախատեսված է հատուկ սարքերում կիրառելու համար: Հատուկ սարքերն այն սարքերն են, որոնց համար չեն պահանջվում միջին մեծության տարածքների կամ սովորական հանգամանքներում առարկաները լուսավորելու համար անհրաժեշտ տեխնիկական պարամետրեր: Այդ սարքերը լինում են հետեւյալ տեսակների՝

ա) սարքեր, որոնց դեպքում լույսի առաջնային նպատակը լուսավորության հետեւյալ տեսակները չեն՝

- i) լուսարձակումը՝ քիմիական կամ կենսաբանական գործընթացներում որպես ազդակ (ինչպես օրինակ՝ պոլիմերացումը, բուժելու/չորացնելու/կոփելու, ֆոտոդինամիկ թերապիայի, բուսաբուծության, կենդանիների խնամքի, միջատների դեմ պայքարում օգտագործվող միջոցների համար կիրառվող ուլտրամանուշակագույն լույսը)։
 - ii) պատկերը ֆոկուսի բերելը եւ արտապատկերելը (ինչպես օրինակ՝ լուսանկարչական խցիկի լուսարձակումը, լուսապատճենահանման սարքը, տեսապրոյեկտորը)։
 - iii) ջերմություն հաղորդելը (ինֆրակարմիր ճառագայթամալ լամպեր)։
 - iv) ազգանշաններ տալը (ինչպես օրինակ՝ երթևեկության կանոնները կարգավորող լուսացույցները կամ թռիչքուղու համար նախատեսված լամպերը)։
- բ) լուսավորման սարքեր, որոնց դեպքում՝
- i) լույսի սպեկտրային բաշխումը, լուսավորվող տարածքի կամ առարկայի տեսքը տեսանելի դարձնելուց բացի, նախատեսված է նաեւ դրանց տեսքը փոփոխելու համար (ինչպես օրինակ՝ I հավելվածի 1-ին կետով սահմանված սննդի ցուցափեղկը լուսավորող կամ գունավոր լամպերը)՝ բացառությամբ փոխկապակցված գունային ջերմաստիճանի տատանումների, կամ
 - ii) լույսի սպեկտրային բաշխումը, լուսավորվող տարածքը կամ առարկան մարդկանց համար տեսանելի դարձնելուց բացի, կարգավորվում է կոնկրետ տեխնիկական սարքավորման հատուկ պահանջներին

համապատասխան (ինչպես օրինակ՝ տաղավարի լուսավորությունը, շոուի համար նախատեսված էֆեկտային լուսավորությունը, թատրոնի լուսավորությունը), կամ

- iii) լուսավորվող տարածքի կամ առարկայի համար անհրաժեշտ է լույսի աղբյուրի բացասական ազդեցությունից հատուկ պաշտպանություն (ինչպես օրինակ՝ լուսազգայուն հիվանդների կամ թանգարանի լուսազգայուն ցուցանմուշների համար հատուկ ֆիլտրամամբ լուսավորությունը), կամ
- iv) միայն արտակարգ իրավիճակների համար պահանջվող լուսավորություն (ինչպես օրինակ՝ վթարային լուսավորության լուսատուները կամ վթարային լուսավորության կարգավորման մեխանիզմները), կամ
- v) լուսավորման արտադրատեսակները պետք է դիմացկուն լինեն ֆիզիկական ծայրահեղ պայմանների նկատմամբ (ինչպիսիք են տատանումները կամ -20°C -ից ցածր կամ 50°C -ից բարձր ջերմաստիճանները),

60 մմ-ից երկար շիկացման վակուումային լամպերը չեն համարվում հատուկ նշանակության լամպեր, եթե դրանք դիմակայում են միայն մեխանիկական ցնցումներին կամ տատանումներին եւ չեն համարվում երթելության ազդանշանային շիկացման վակուումային լամպեր, կամ դրանք ունեն 25 Վտ-ից բարձր անվանական հզորություն եւ կոնկրետ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են նաեւ թիվ 874/2012 կանոնակարգի (ԵՄ) համաձայն բարձր էներգաարդյունավետության դասերին պատկանող լամպերին (ինչպես օրինակ՝ ԷՄՀ

ճառագայթումների բացակայություն, 95-ից բարձր կամ դրան հավասար ԳՀՑ-ի արժեքը եւ յուրաքանչյուր 1 000 լմ-ի համար 2 մՎտ-ից պակաս կամ դրան հավասար ուլտրամանուշակագույն ճառագայթում)».

բ) 9-րդ կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«9. «Վոլֆրամի հալոգեն լամպ» նշանակում է շիկացման լամպ, որում շիկացման թելը պատրաստված է վոլֆրամից եւ պատված է հալոգեններով կամ հալոգենային միացություններ պարունակող գազով ու գտնվում է քվարցից կամ ամուր ապակուց պատրաստված անոթում, որը կարող է պատված լինել կրկնակի թաղանթով: Այն կարող է ապահովվել համալիր էլեկտրասնուցմամբ.».

գ) լրացվել է հետեւյալ բովանդակությամբ 19-րդ կետով՝

«19. «Երթեւեկության ազդանշանային շիկացման վակուումային լամպ» նշանակում է առաջին 1 000 ժամ աշխատանքի ընթացքում 60 Վ-ից ավելի անվանական լարմամբ եւ 2 %-ից քիչ անսարքության ցուցանիշով շիկացման վակուումային լամպ:»:

2) 3-րդ հոդվածը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 3

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

1. Կենցաղային ոչ ուղղորդված լամպերը պետք է համապատասխանեն II հավելվածով սահմանված էկոնախագծմանը ներկայացվող պահանջներին:

Էկոնախագծմանը ներկայացվող յուրաքանչյուր պահանջ պետք է կիրառվի հետեւյալ փուլերին համապատասխան՝

1-ին փուլ՝ 2009 թվականի սեպտեմբերի 1.

2-րդ փուլ՝ 2010 թվականի սեպտեմբերի 1.

3-րդ փուլ՝ 2011 թվականի սեպտեմբերի 1.

4-րդ փուլ՝ 2012 թվականի սեպտեմբերի 1.

5-րդ փուլ՝ 2013 թվականի սեպտեմբերի 1.

6-րդ փուլ՝ 2018 թվականի սեպտեմբերի 1:

Եթե պահանջը չեղյալ չի ճանաչվում կամ այլ բան չի նախատեսվում, ապա այն շարունակվում է կիրառվել հետագա փուլերում սահմանված պահանջների հետ:

2. Հատուկ նշանակության լամպերը համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

ա) եթե լամպի գունավորության կոորդինատները միշտ գտնվում են հետևյալ միջակայքում՝

$$x < 0,270 \text{ կամ } x > 0,530$$

$$y < -2,3172 x^2 + 2,3653 x - 0,2199 \text{ կամ } y > -2,3172 x^2 + 2,3653 x - 0,1595,$$

գունավորության կոորդինատները ներկայացվում են 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով կազմվող տեխնիկական փաստաթղթերի փաթեթում, որը ցույց է տալիս, որ նշված կոորդինատներով պայմանավորված՝ տվյալ լամպերը համարվում են հատուկ նշանակության լամպեր.

բ) հատուկ նշանակության բոլոր լամպերի դեպքում արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության բոլոր ձևերում պետք է նշել կիրառության ոլորտը, ինչպես նաև ներառել զգուշացում, որ դրանք նախատեսված չեն այլ սարքերում օգտագործելու համար:

Տեխնիկական փաստաթղթերի փաթեթը, որը համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով կազմվում է 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն, ներառում է տեխնիկական պարամետրեր, որոնց արդյունքում լամպի նախագիծը դառնում է նշված կիրառության ոլորտին հատուկ:

Անհրաժեշտության դեպքում պարամետրերը կարող են ներկայացվել այնպես, որ արտադրողի մտավոր սեփականության իրավունքներին առնչվող առետրային տեսանկյունից կարելի տեղեկություններ չքացահայտվեն:

Եթե մինչեւ վաճառվելը լամպն ակնհայտորեն ցուցադրվում է վերջնական սպառողին, ապա դրա փաթեթվածքի վրա հստակ եւ տեսանելի ձեւով նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

- i) կիրառության ոլորտը.
- ii) բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար պիտանի չլինելը. եւ
- iii) տեխնիկական պարամետրերը, որոնց արդյունքում լամպի նախագիծը դառնում է նշված կիրառության ոլորտին հատուկ:

«iii» կետում նշված տեղեկությունը կարող է նաեւ ներկայացված լինել փաթեթվածքի ներսում:»:

Հոդված 2

Թիվ 245/2009 կանոնակարգում(ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 245/2009 կանոնակարգի (ԵՀ) III հավելվածում կատարվել են փոփոխություններ՝ սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված կարգով:

Հոդված 3

Թիվ 1194/2012 կանոնակարգում (ԵՄ) կատարվող փոփոխությունները

Թիվ 1194/2012 կանոնակարգում (ԵՄ) կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. 2-րդ հոդվածը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ՝

ա) 4-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

«4. «հատուկ նշանակության արտադրանք» նշանակում է սույն կանոնակարգով նախատեսված տեխնոլոգիաներով աշխատող արտադրանք, որը, սակայն, տեխնիկական փաստաթղթերի փաթեթում ներկայացված տեխնիկական պարամետրերով պայմանավորված, նախատեսված է հատուկ սարքերում կիրառելու համար: Հատուկ սարքերն այն սարքերն են, որոնք չեն պահանջում միջին մեծության տարածքների կամ սովորական հանգամանքներում առարկաները լուսավորելու համար անհրաժեշտ տեխնիկական պարամետրեր: Այդ սարքերը լինում են հետևյալ տեսակների՝

ա) սարքեր, որոնց դեպքում լույսի առաջնային նպատակը լուսավորության հետևյալ տեսակները չեն՝

i) լուսարձակումը՝ քիմիական կամ կենսաբանական գործընթացներում որպես ազդակ (ինչպես օրինակ՝ պոլիմերացումը, բուժելու/չորացնելու/կոփելու, ֆոտոդինամիկ թերապիայի, բուսաբուծության, կենդանիների խնամքի, միջատների դեմ պայքարում օգտագործվող միջոցների համար կիրառվող ուլտրամանուշակագույն լույսը).

ii) պատկերի ստացում եւ արտապատկերումը (ինչպես օրինակ՝ լուսանկարչական խցիկի լուսարձակումը, լուսապատճենահանման սարքը, տեսապրոյեկտորը).

- iii) ջերմություն հաղորդելը (ինֆրակարմիր ճառագայթմամբ լամպեր).
 - iv) ազգանշաններ տալը (ինչպես օրինակ՝ երթևեկության կանոնները կարգավորող լուսացույցները կամ թռիչքուղու համար նախատեսված լամպերը).
- բ) լուսավորման սարքեր, որոնց դեպքում՝
- i) լույսի սպեկտրային բաշխումը, լուսավորվող տարածքի կամ առարկայի տեսքը տեսանելի դարձնելուց բացի, նախատեսված է նաեւ դրանց տեսքը փոփոխելու համար (ինչպես օրինակ՝ I հավելվածի 1-ին կետով սահմանված սննդի ցուցափեղկը լուսավորող կամ գունավոր լամպերը)՝ բացառությամբ փոխկապակցված գունային ջերմաստիճանի տատանումների. կամ
 - ii) լույսի սպեկտրային բաշխումը, լուսավորվող տարածքը կամ առարկան մարդկանց համար տեսանելի դարձնելուց բացի, կարգավորվում է կոնկրետ տեխնիկական սարքավորման հատուկ պահանջներին համապատասխան (ինչպես օրինակ՝ տաղավարի լուսավորությունը, շուրի համար նախատեսված էֆեկտային լուսավորությունը, թատրոնի լուսավորությունը). կամ
 - iii) լուսավորվող տարածքի կամ առարկայի համար անհրաժեշտ է լույսի աղբյուրի բացասական ազդեցությունից հատուկ պաշտպանություն (ինչպես օրինակ՝ լուսազգայուն հիվանդների կամ թանգարանի լուսազգայուն ցուցանմուշների համար հատուկ ֆիլտրմամբ լուսավորությունը). կամ

- iv) միայն արտակարգ իրավիճակների համար պահանջվող լուսավորություն (ինչպես օրինակ՝ վթարային լուսավորության լուսատուները կամ վթարային լուսավորության կարգավորման մեխանիզմները). կամ
- v) լուսավորման սարքերը պետք է դիմացկուն լինեն ֆիզիկական ծայրահեղ պայմանների նկատմամբ (ինչպիսիք են տատանումները կամ $-20\text{ }^{\circ}\text{C}$ -ից ցածր կամ $50\text{ }^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանները).

60 մմ-ից երկար շիկացման վակուումային լամպերը չեն համարվում հատուկ նշանակության արտադրանք, եթե դրանք դիմակայում են միայն մեխանիկական ցնցումներին կամ տատանումներին եւ չեն համարվում երթելելության ազդանշանային շիկացման վակուումային լամպեր, կամ դրանք ունեն 25 Վտ-ից բարձր անվանական հզորություն եւ կոնկրետ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են նաեւ թիվ 874/2012 կանոնակարգի (ԵՄ) համաձայն բարձր էներգաարդյունավետության դասերին պատկանող լամպերին (ինչպես օրինակ՝ ԷՄՀ ճառագայթումների բացակայություն, 95-ից բարձր կամ դրան հավասար ԳՀՑ-ի արժեքը եւ յուրաքանչյուր 1 000 լմ-ի համար 2 մՎտ-ից պակաս կամ դրան հավասար ուլտրամանուշակագույն ճառագայթում).».

բ) 28-րդ կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«28. «լուսատու» նշանակում է արտադրանք, որը բաշխում, ֆիլտրում կամ ձեւափոխում է մեկ կամ ավելի լամպերից փոխանցված լույսը եւ բաղկացած է այն բոլոր մասերից, որոնք անհրաժեշտ են լամպերի եւ անհրաժեշտության դեպքում՝ հաղորդագծերի օժանդակ միջոցների ու դրանք էլեկտրասնուցմանը միացնելու համար նախատեսված հարմարանքների համար հենարան լինելու, դրանք ֆիքսելու ու պաշտպանելու համար: Եթե արտադրանքի

առաջնային նպատակը լուսավորելը չէ, եւ օգտագործման ժամանակ առաջնային նպատակն ապահովելու համար արտադրանքը կախված է էներգիամատակարարումից (օրինակ՝ սառնարաններ, կարի մեքենաներ, էնդոսկոպներ, արյան անալիզատորներ), ապա սույն կանոնակարգի նպատակներից ելնելով՝ այդ արտադրանքը չի համարվում լուսատու.»:

գ) լրացվել է հետեւյալ բովանդակությամբ 31-րդ կետով՝

«31. «Երթելիության ազդանշանային շիկացման վակուումային լամպ» նշանակում է առաջին 1 000 ժամ աշխատանքի ընթացքում 60 Վ-ից բարձր անվանական լարմամբ եւ 2 %-ից պակաս անսարքության ցուցանիշով շիկացման վակուումային լամպ:»:

2. I, III եւ IV հավելվածներում կատարվել են փոփոխություններ՝ սույն կանոնակարգի II հավելվածի սահմանված կարգով:

Հոդված 4

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի օգոստոսի 25-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ԶՈՒՆԿԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Թիվ 244/2009 կանոնակարգի (ԵՀ) III հավելվածում

կատարվող փոփոխությունները

1. III հավելվածի 1.2(Բ) կետի վերջին պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Լամպի արդյունավետության պահանջներով՝ բարձր ճնշման նատրիումային լամպերն ունեն առնվազն 13-րդ աղյուսակում նշված լամպի լուսային հոսքի կայունության եւ կենսունակության գործակիցներ:

Աղյուսակ 13

Բարձր ճնշման նատրիումային լամպերի լուսային հոսքի կայունության եւ կենսունակության գործակիցները. 2-րդ փուլ

Բարձր ճնշման նատրիումային լամպի կատեգորիան եւ չափման նպատակով լամպի շահագործման ժամկետը	Լամպի լուսային հոսքի կայունության գործակից	Լամպի կենսունակության գործակից
$P \leq 75$ Վ	$Ra \leq 60$	$> 0,80$
Լամպի 12 000 ժ շահագործման ժամկետում չափված ԼՀԿԳ-ը եւ ԼԿԳ-ը	$Ra > 60$	$> 0,75$
	Բարձր ինտենսիվության սնդիկային լամպի բալաստով աշխատելու համար նախատեսված բոլոր արդիականացված լամպերը	$> 0,75$
$P > 75$ Վ ≤ 605 Վ	$Ra \leq 60$	$> 0,85$
	$Ra > 60$	$> 0,70$
	Բարձր ինտենսիվության սնդիկային լամպի բալաստով աշխատելու համար նախատեսված բոլոր արդիականացված լամպերը	$> 0,75$

Բարձր ճնշման սնդիկային լամպի բալաստով աշխատելու համար նախատեսված արդիականացված լամպերին ներկայացվող՝ 13-րդ աղյուսակում նշված պահանջները կիրառվում են սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև վեց տարի ժամկետով:»:

2. III հավելվածի 1.2(Գ) կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Գ. Երրորդ փուլի պահանջները

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ութ տարի հետո.

Լամպի արդյունավետության պահանջներով մետաղահալոգեն լամպերն ունեն առնվազն 14-րդ աղյուսակում նշված լամպի լուսային հոսքի կայունության եւ կենսունակության գործակիցներ:

Աղյուսակ 14

Մետաղահալոգեն լամպերի լուսային հոսքի կայունության եւ կենսունակության գործակիցներ. 3-րդ փուլ

Լամպի շահագործման ժամկետ	Լամպի լուսային հոսքի կայունության գործակից	Լամպի կենսունակության գործակից
12 000	> 0,80	> 0,80»

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Թիվ 1194/2012 կանոնակարգի (ԵՄ) I, III և IV հավելվածներում
կատարվող փոփոխությունները**

1. I հավելվածի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

«2. Հատուկ նշանակության բոլոր լամպերի դեպքում արտադրանքի վերաբերյալ տեղեկատվության բոլոր ձևերում պետք է նշել կիրառության ոլորտը, ինչպես նաև զգուշացնել, որ դրանք նախատեսված չեն այլ սարքավորումներում օգտագործելու համար:

Տեխնիկական փաստաթղթերի փաթեթը, որը համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով կազմվում է 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն, պետք է ներառի տեխնիկական պարամետրեր, որոնց արդյունքում լամպի նախագիծը դառնում է փաթեթվածքի վրա նշված կիրառության ոլորտին հատուկ:

Անհրաժեշտության դեպքում պարամետրերը կարող են ներկայացվել այնպես, որ արտադրողի մտավոր սեփականության իրավունքներին առնչվող առետրային տեսանկյունից կարելի է տեղեկությունները չբացահայտվեն:

Եթե մինչև վաճառվելը լամպն ակնհայտորեն ցուցադրվում է վերջնական սպառողին, ապա փաթեթվածքի վրա հստակ եւ տեսանելի ձևով նշվում են հետևյալ տեղեկությունները՝

ա) կիրառության ոլորտը.

բ) բնակելի շինությունների սենյակների լուսավորության համար պիտանի չլինելը. եւ

գ) տեխնիկական պարամետրերը, որոնց արդյունքում լամպի նախագիծը դառնում է նշված կիրառության ոլորտին հատուկ:

«գ» կետում նշված տեղեկությունը կարող է նաև ներկայացված լինել փաթեթվածքի ներսում:»:

2. III հավելվածի 2.3 կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝

«2.3 Էլեկտրասնուցման ցանցերի եւ լամպերի միջեւ տեղադրման համար նախատեսված սարքավորումների ֆունկցիոնալությանը ներկայացվող պահանջները

ա) երկրորդ փուլից սկսած՝ էլեկտրասնուցման ցանցերի եւ լամպերի միջեւ տեղադրման համար նախատեսված սարքավորումները պետք է համապատասխանեն այն լամպերի հետ համատեղելիության ժամանակակից պահանջներին, որոնց էներգաարդյունավետության ինդեքսը (որը եւ՛ ուղղորդված, եւ՛ ոչ ուղղորդված լամպերի համար հաշվարկվել է սույն հավելվածի 1.1 կետում սահմանված մեթոդով) կազմում է առավելագույնը՝

— 0,24՝ ոչ ուղղորդված լամպերի համար (ենթադրելով, որ $\Phi_{use} =$ ընդհանուր անվանական լուսային հոսք)։

— 0,40՝ ուղղորդված լամպերի համար:

Եթե լուսավորության կարգավորման սարքը միացված է կարգավորման ամենացածր ռեժիմի սահմանմամբ, որի համար աշխատող լամպերն էներգիա են սպառում, ապա աշխատող լամպերը լրիվ բեռնվածքի պայմաններում պետք է ճառագայթեն լուսային հոսքի առնվազն 1 %-ը:

Եթե շուկայահանված լուսատուներ եւ վերջնական սպառողի կողմից փոխարիման ենթակա լամպերն ունեն լուսատու, ապա այդ լամպերը, թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) համաձայն, պետք է պատկանեն էներգիայի երկու բարձրագույն դասերից մեկին, որոնց հետ լուսատուները, ըստ պիտակի, համարվում են համատեղելի:

բ) 3-րդ փուլից սկսած՝ շուկայահանված լուսատու, որը նախատեսված է վերջնական սպառողի կողմից փոխարինման ենթակա լամպերի համար, պետք է լիովին համատեղելի լինի թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) համաձայն էներգաարդյունավետության առնվազն «A +» դասին պատկանող լամպերի հետ: Այդպիսի լուսատուների տեխնիկական փաստաթղթերի փաթեթը, որը համապատասխանության գնահատում իրականացնելու նպատակով կազմվում է 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն, ներառում է արտադրանքի պարամետրերի եւ այնպիսի պայմանների առնվազն մեկ իրական զուգակցություն, որտեղ պետք է փորձարկվի արտադրանքը:»:

3. IV հավելվածի 3-րդ կետը շարադրվել է հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Էլեկտրասնուցման ցանցերի եւ լամպերի միջեւ տեղադրման համար նախատեսված սարքավորման ստուգման կարգը

Անդամ պետության մարմիններն անցկացնում են մեկ միավորի փորձարկում:

Սարքավորումը համարվում է սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան, եթե սահմանվում է, որ այն համապատասխանում է III հավելվածի 2.3 կետի համատեղելիության դրույթներին՝ համատեղելիությունը գնահատելու համար կիրառելով ժամանակակից մեթոդներ ու չափանիշներ, այդ թվում՝ այն մեթոդներն ու չափանիշները, որոնց հղում է կատարվել *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակված փաստաթղթերում: Եթե III հավելվածի 2.3(ա) կետի համատեղելիության դրույթներով հանգել են այն եզրակացության, որ մոդելը համատեղելի չէ, ապա տվյալ մոդելը դեռեւս համարվում է պահանջներին համապատասխանող, եթե այն

բավարարում է թիվ 874/2012 պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) III հավելվածի 3.3 կետով կամ 3.2 հոդվածով սահմանված՝ արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող պահանջներին:

Համատեղելիության պահանջներից բացի՝ լամպի կարգավորման մեխանիզմները փորձարկվում են նաեւ III հավելվածի 1.2 կետով սահմանված արդյունավետության պահանջների առումով: Փորձարկումն իրականացվում է լամպի կարգավորման մեխանիզմների մեկ միավորի, այլ ոչ թե լամպի կարգավորման մեխանիզմների մի քանի միավորի համակցության նկատմամբ, եթե նույնիսկ մոդելը նախատեսված է լամպի կարգավորման մեխանիզմների այլ միավորների գործարկմամբ տվյալ սարքվածքում լամպը (լամպերը) կիրառելու համար: Մոդելը համարվում է պահանջներին համապատասխանող, եթե արդյունքները սահմանային արժեքներից չեն տարբերվում ավելի քան 2,5 %-ով: Եթե արդյունքները սահմանային արժեքներից տարբերվում են ավելի քան 2,5 %-ով, ապա փորձարկվում է եւս երեք միավոր: Մոդելը համարվում է սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանող, եթե վերջին երեք փորձարկումների արդյունքների միջինը սահմանային արժեքներից չի տարբերվում ավելի քան 2,5 %-ով:

Համատեղելիության պահանջներից բացի՝ ստուգվում է նաեւ սպառողին վաճառելու համար նախատեսված լուսատուների փաթեթվածքներում լամպերի առկայությունը: Մոդելը համարվում է պահանջներին համապատասխանող, եթե առկա չէ որեւէ լամպ, կամ եթե առկա լամպերը պատկանում են III հավելվածի 2.3 կետերով նախատեսված էներգիայի դասերին:

Համատեղելիության պահանջներից բացի՝ լուսավորության կարգավորման սարքերը փորձարկվում են շիկացման լամպերով, եթե

կարգավորման սարքի համար սահմանվել է լուսավորության նվազագույն մակարդակ: Մոդելը համարվում է պահանջներին համապատասխանող, եթե լամպերն արտադրողի ցուցումներին համապատասխան տեղադրվելու դեպքում լրիվ բեռնվածքի պայմաններում ապահովում են լուսային հոսքի առնվազն 1 %-ը:

Եթե մոդելը չի համապատասխանում վերոնշյալ համապատասխանության կիրառելի չափանիշներին, ապա այն համարվում է պահանջներին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմինները մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մյուս անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին են տրամադրում փորձարկման արդյունքներն ու այլ համապատասխան տեղեկություններ:»:
